Նկար 1. *էկոլոգիական հետքը և կենսակարողությունը (Սխեմա)*

«Էկոլոգիական հետքը» ներկայանում է երեք՝ սպառման, արտադրության և վաճառքի ցուցանիշներով: Ինչպիսի՞ կապի մեջ են այս երեք ցուցանիշները: Բնակչության ներուժի և էկոլոգիական ծառայությունների հարաբերությունը գնահատելիս օգտագործվում է «Սպառման Էկոլոգիական Հետք» ցուցանիշը: Այս ցուցանիշը բնութագրում է տվյալ պետության (կամ նրա մի մասի) բնակչության կողմից իր տարածքի կենսակարողության սպառումը: Սպառման էկոլոգիական հետքի հաշվարկում ներառված է նաև այլ պետություններ արտահանված և ներքին սպառման համար ներմուծված պաշարներն ու էկոլոգիական ծառայությունները: Սպառման էկոլոգիական հետքի ցուցանիշը անմիջական կապի մեջ է այդ երկրի բնակչության կենսակարողության սպառման վարքագծից:

«Արտադրության էկոլոգիական հետք»-ը ներկայացնում է հիմնական արտադրանքի (վարելահողեր, արոտավայրեր, անտառներ, անասնաբուծական և ձկնաբուծական տարածքներ) և կենսաարտադրական տարածքների հանրագումարը, ներառյալ՝ կառուցապատված տարածքները (ճանապարհներ, քաղաքներ, արդյունաբերական օբյեկտներ) և այն տարածքը, որն անհ-

ռաժեշտ է բնական վառելիքի այրման հետևանքով առաջացած ածխաթթու գազի կլանման համար (Նկար 6.3): Արտադրության էկոլոգիական հետքը փաստացի արտացոլում է երկրում կամ տարածաշրջանում արտադրական գործունեության արդյունքում սպառված կենսակարողությունը: Այս ցուցանիշը մոտ է «Համախառն ներքին արդյունքին » (ՀՆԱ), որը երկրում արտադրված բոլոր ապրանքների և ծառայությունների արժեքների հանրագումարն է:

«Զուտ առևտրային էկոլոգիական հետք»-ը արտացոլում է կենսակարողությունների սպառումը միջազգային առևտրի միջոցով: Փաստացի այս ցուցանիշը ստացվում է արտահանված և ներմուծված էկոլոգիական հետքերի ցուցանիշների տարբերությամբ: Եթե արտահանման էկոլոգիական հետքը ավելի բարձր է, քան ներմուծմանը, ապա երկիրը վերականգնվող ռեսուրսներ զուտ արտահանող է և ընդհակառակը, այն երկիրը, որի ներմուծման էկոլոգիական հետքը գերազանցում է արտահանմանը, կախված է վերականգնվող ռեսուրսներից և այլ երկրների կողմից արտադրվող էկոլոգիական ծառայություններից: Ընդհանուր սպառման էկոլոգիական հետքի հաշվարկը ներկայացված է նկ. 2.-ում:

Նկար 2. *Պետության էկոլոգիական հետքի հաշվարկը*

Այսպես օրինակ՝ Չինաստանում արտադրված, բայց այլ երկրում վաճառված ավտոմեքենաների իբրև պաշարի սպառումը և դրանցով պայմանավորված արտանետումները ավելի շատ արտահայտվում են ներմուծող երկրի, քան Չինաստանի էկոլոգիական հետքի ցուցանիշով: